ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի N 52-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Կիմա Խաչատրյանի անվան Գառնիի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի 2019 թվականի հուլիսի 12-ի N 77 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2019 թվականի մարտի 13-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և 100 տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների 2019 թվականի հաստիքացուցակները հաստատելու մասին»* N 52-Ա որոշման N 10 հավելվածը լրացնել նոր 8-րդ գլխով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

| VIII ՆԵՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏՆԵՐ | | | |
|---|---|---|---|
| 1. | Սրտաբան | 0.25 | |
| 2. | Նյարդաբան | 0.25 | |
| 3. | Ներզատաբան | 0.25 | |
| 4. | Սոնոգրաֆիստ | 0.25 | |
| 5. | Քիթ-կոկորդ-ականջաբան | 0.25 | |
| 6. | Ակնաբույժ | 0.25 | |
| 7. | Նեղմասնագիտական կաբինետի բուժքույր | 0.5 | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 2.0 | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՍՏԻՔՆԵՐ՝ | | 57.5 | |

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

**2019 թվականի հուլիսի 18**
**ք. Հրազդան**
N 149-Ա